ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

08 հունիս 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Սոնա Մարգարյանը, Տիգրան Նազարյանը, Մարատ Շահբազյանը:

Նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Լուսինե Մարտիրոսյանը, առաջատար մասնագետ Անի Գրիգորյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Հայկանուշ Ավագյանը, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ Արմեն Աղաջանյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Սամվել Այվազյանը և առաջատար մասնագետի ժ/պ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ հունիսի 8-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 21-ի թիվ 36-Ն, Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 27-ի թիվ 11-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
6) Եղեգնաձոր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 21-ի թիվ 37-Ն, Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի թիվ 07-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 13-ի թիվ 36-Ն և հուլիսի 3-ի թիվ 61-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:
8) Եղեգնաձոր համայնքում թատրոն բացելու վերաբերյալ ուղերձ ընդունելու մասին:
9) Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տերմինալների տեղադրման համար թույլտվություն տալու, համապատասխան վճարների չափերը որոշելու և համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 63-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
10) Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
11) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:
12) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերը մրցույթով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
13) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
14) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
15) Համայնքի ավագանու 25.09.2021թ-ի թիվ 97-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
16) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

17) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի թիվ 23-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) Պակասեցնել գործառնական դասակարգման՝

11.01.02 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 4 318 710 (չորս միլիոն երեք հարյուր տասնութ հազար յոթ հարյուր տաս) ՀՀ դրամ,

09.01.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածից 1 560 000 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,

01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1 639 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ:

2) Ավելացնել գործառնական դասակարգման՝

ա. 01.01.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման.

4261 (գրասենյակային նյութեր և հագուստ) հոդվածին 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,

4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

4222 (արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր) հոդվածին 1 018 710 (մեկ միլիոն տասնութ հազար յոթ հարյուր տաս) ՀՀ դրամ:

բ. 01.06.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածին 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ,

գ. 04.02.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ,

դ. 09.01.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ,

ե. 09.05.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 560 000 (հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,

զ) 06.03.01 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 810 000 (ութ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ,

է) 08.02.07 ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 829 000 (ութ հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ն/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 82-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարիների գրությունները՝ հանձնաժողովի կազմում թեկնածուներ առաջադրելու մասին՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

- Հանձնաժողովի նախագահ, սակարկություններն իրականացնող՝ Արմեն Աղաջանյան /Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի ժ/պ/
- Արձանագրող՝ Անի Հասրաթյան /Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժ/պ/

Հանձնաժողովի անդամներ՝

- Գրիգոր Սարգսյան /համայնքի ավագանու անդամ/
- Սամվել Ոսկանյան /համայնքի ավագանու անդամ/
- Վահե Վարդանյան /համայնքի ավագանու անդամ/
- Սյուզաննա Մարգարյան /Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի ժ/պ/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 36-Ն, ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 11-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 և 14 հոդվածների պահանջներով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 3-րդ կետի պահանջով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 21-ի՝ «Համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 36-Ն և Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 27-ի՝ «Գլաձոր համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 11-Ն որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 37-Ն, ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 07-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի պահանջներով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 21-ի՝ «Համայնքում տեղական ինքկառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 37-Ն և Գլաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի՝ «Գլաձոր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ն/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի ԹԻՎ 36-Ն ԵՎ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ԹԻՎ 61-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 36-Ն և հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի,

առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը, համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները և սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ավագանու 13.03.2020թ.-ի թիվ 37-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 61-Ն որոշումներ ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ն/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԹԱՏՐՈՆ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի պահանջներով, քննարկելով Յու. Բարսեղյանի կողմից ներկայացված դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1.Եղեգնաձոր համայնքում թատրոն բացելու նպատակով ընդունել ուղերձ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐՈՎ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 63-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման համար ինտերնետ կապի ծառայություն մատուցող կազմակերպություններին տալ թույլտվություն՝ ամսական 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ վճարի դիմաց:

2. «Գուդլայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման համար տալ թույլտվություն՝ ամսական 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ վճարի դիմաց՝ Մալիշկա և Գլաձոր բնակավայրերի համայնքների վարչական ղեկավարների նստավայրերում անվճար ինտերնետային ծառայություն մատուցելու պայմանով:

3. «Ֆասթ նեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ միայն Մալիշկա բնակավայրի գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման համար տալ թույլտվություն՝ ամսական 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ վճարի դիմաց:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տերմինալների տեղադրման համար համապատասխան կազմակերպություններին տալ թույլտվություն՝ ամսական 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ վճարի դիմաց:

5. Սույն որոշման ընդունմամբ՝ ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 10-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող գիշերային լուսավորության հենասյուներով մալուխային գծերի անցկացման և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում տերմինալների տեղադրման համար թույլտվություն տալու և համապատասխան վճարների չափերը որոշելու մասին» թիվ 63-Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ն/

Լսեցին.

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայասատանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող, 10-001-0383-0165, 10-001-0383-0164 և 10-001-0383-0177 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար՝ 1.73576 հա, 4.30105 հա և 1.85461 հա մակերեսներով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք հողատարածքների նպատակային նշանակությունը փոփոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի /բնակավայրերի/ վարչական տարածքում գտնվող համայնքային և սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց 3/1 հասցեում գտնվող, 10-001-0140-0043 կադաստրային ծածկագրով, 0.00400 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 1-ի N 75 դրական եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Քաղաքացի Իսկուհի Լևոնի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 13-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության 0.2642 հա բնակելի կառուցապատման հողի (կադաստրային ծածկագիր՝ 10-042-0002-0005/ նպատակային նշանակությունը փոխել գյուղատնտեսական նշանակության հողերի, գործառնական նշանակությունը՝ բազմամյա տնկարկներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.09.2021Թ-Ի ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Համայանքային սեփականություն հանդիսացող 0.0018 հա հողատարածքը կառուցապատման իրավունքով հատկացնելու մասին» թիվ 97-Ա որոշման բովանդակության 1-ին կետում «10-001-0045-0011» կադաստրային ծածկագիրը փոխարինել «10-001-0045-0069» կադաստրային ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին.
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայասատանի Հանրապետության էկոնոմիայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն Ջեմմա Արարատի Վարդանյանին, Արա և Քրիստինե Մառլենի Վարդանյաններին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 2196534 վկայական), 10-001-0231-0014 կադաստրային ծածկագրով, 0.352 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղող հողատարածքից 0.1195 հա-ի նպատակային նշանակությունը փոփոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2022 թվականի սեպտեմբերի 15-ին, ժամը 18:00-ին՝ Գլաձոր բնակավայրի մշակույթի տան կոնֆերանս դահլիճում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը